

ԱՆՏԻՊ ԷՁԵՐ

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐԵԱՆ

95-րդ Պատրիարք Երուսաղէմի

ԱՊՐԻԼ 24

Այս տարի կը լրանայ 74-ամեակը Ապրիլ քսանչորսի ահաւոր եղեռնին և մեր մէկուկէս միլիոն գարնանամահ վկաներուն, որոնք բոլորի կարմիր յիշատակովը անգամ մը եւս կը բացուին մեր սիրտերը, գերագոյն ոգեկոշուծի մը մէջ ոգելու անոնց անթառամ փառքը, որքան եղբրական նոյնքան խրախուսիչ:

Տխուր է այդ պատկերը, բայց ոչ անփառունակ, որովհետեւ մահուան արհաւիրքը չէ միայն որ կը սաւառնի հոն այլ նաեւ անմահութեան յոյսը, որ արիւնոտ բայց անթառամ ծաղիկի մը նման կը բացուի մեր պատմութեան և հոգիներուն խորը: Վասնզի այդ մահը ակամայ և անգիտակցօրէն կրուած մահ մը չէ, այլ գիտակցօրէն դիմաւորուած նահատակութիւն մը, յանուն հայօրէն ապրելու երազին և իրաւունքին:

Հակառակ անցնող տարիներու անշրպետին, մեր հոգիները չեն պաղած թափուած արիւնէն հազարներու և մեր աչքերը կը պահեն սահմոհեցուցիչ տեսարանները մեծ սպանդին, քիչ անգամ գործադրուած մարդկային պատմութեան մէջ:

Միւս կողմէ սակայն իրականութիւն է որ մենք կրցանք մէկդի հրել մեր վրայ դրուած տապանաքարը: Մեր դահիճը զարկաւ մեզի ուժգնօրէն բայց չկրցաւ խորտակել զմեզ:

Հրաշք մը միայն կրնայ մեզի դարձնել մեր հողերը երկնային արդարութիւնը միայն կրնայ լուծել մեր արդար դատը: Այդ հրաշքը պատմութեան մէջ քիչ անգամ կը պատահի, բայց հոգիներուն մէջ պէտք է շինուի: Եւ ատիկա այն ատեն միայն կը շինուի, եթէ մենք գիտնանք պահել մեր ես-ը, մեր հոգին, այն անփշրելի ազամանդը որ 2000 տարիներ դիմացեր է պատմութեան բոլոր աղէտներուն:

Սեւ գիշերը իջաւ մեր իղձերուն և երազներուն վրայ, ամայացաւ մեր երկիրը իր զաւակներէն, մեր երազներու բոցավառ խարոյկէն մնաց միայն պսպղուն ճառագայթ մը Արագածի ստորոտին՝ որուն շողերը կը մնան առայժմ գերագոյն ապահովութիւնը մեր երէկուան երազներուն և վաղուան յոյսին: Արտաքին մահացումներ շատ են փորձուած մեր վրայ, սակայն մենք ունեցած ենք միշտ հոգեկան ոյժ մը, զոր վերլուծել դիւրին չէ, որուն մէջ կը միանան ու կը նոյնանան, լեզու կրօն, աւանդութիւն, ցեղային ընդունակութիւններ, ընելու համար մեր ժողովուրդը կենսունակ և ուժեղ ապահովելու համար գոյատեւման խորհուրդը:

Մեր ժողովուրդին ողջակէզը քաղաքական փաստ մը ըլլալէ աւելի, մեր հոգիին արիւնումն է, այն ոգիին՝ որ գիտցած է ժամանակը ոտնահարել, հակառակ իր վրայ տեղացող հարուածներուն: Վիրաւոր բայց հզօր հոգի մը որ ունեցած է անծանօթ հեղուկը հզօրագոյն երազին՝ զոր արեւելքը ոստայնած ըլլայ երբեք:

Ժողովուրդ մը արտաքին այսքան հարուածներուն դիմանալու համար պէտք է գիտակից ըլլայ իր ներքին արժէքին: Մեր նախահայրերը չեն մեռած, մեռած ըլլալու սիրոյն, անոնց այդ ճակատագրական կեցուածքին մէջ կայ մեր ժողովուրդի կատարելութեան գաղափարը: Մենք կը տարբերինք ուրիշ ժողովուրդներէն ո՛չ միայն մեր ինքնութեամբ, այլ մանաւանդ զայն իրագործելու կերպով, վերածելու մահը

անմահութեան արշալոյսին:

Ահա թէ ինչու համար չենք կրնար հրաժարիլ մեր իրաւունքներէն, մեր աստուածարեալ նախնիքներու արեան գինը եղող հողերէն, որոնց սէրը անհերքելի և չհինցող զգացում մըն է, անհերքելի մուրհակը մեր դարաւոր ժառանգութեան: Հողը հողի ունի, ժողովուրդն ու հայրենիքը հողը կը կազմեն անքակտելի գոյութիւն մը, մին առանց միւսին չեն կրնար երկար ապրիլ: Այդ հողին ձայնը, շունչը, լոյսը պէտք չէ մարին մեր հոգիներուն խորը: Ամէն հայ մեծ է և ամբողջ՝ միայն իր հայրենի հողին վրայ: Վա՛յ այն ժողովուրդին, որ երկրորդ անգամ կը մեռնէ իր մեռելները:

Հսկայ մեր սուգին ո՛վ տարաբախտ պսակ, Ապրիլ 24-ի մեր բոլոր անմահ հերոսներու արիւնովը ներկուած, որուն մարմինը հիւսուեցաւ մեր ցեղին պարմաններուն և ծերերուն, կոյսերուն և մանուկներուն ճերմակ հաւատքէն: Եւ տակաւին անոնք որ իրենց մարմիններուն մարմարը տուին իր յօրինումին և իրենց արիւնին կրակը՝ ապահովելու մշտական կեանքին զարկը, որ ամբողջական գերեզմանի մը սահմանուած կը կարծուէր: Ականջ տուէք մեր ձայնին ով մեր բոլոր մեռելներ, որ գարնան իրիկուն մը ձեր մարմինները միայն յանձնեցիք եղեռնին, բայց չյանձնեցիք անմահութիւնը ձեր հոգիներուն: Ոտքի՛ ելէք ձեր գերեզմաններէն, եթէ կան, որովհետեւ մեզի համար գերագոյն պէտքը ձեր աննուաճ կենդանութիւնն է գերեզմանէն անդին:

Եկէք մեզի, ձեր բոլոր վրէժներուն կարմիր և կրակէ օձերով, մենք պէտք ունինք անոնց օղակներով խեղդելու թշնամին: Եկէք մեզի, որովհետեւ տակաւին երէկ ձեզ անճիտող ձեռքը, նորէն իր մերկ դաշոյնը կը ճօճէ մեր դէմ, արեան գրգիռով արբշիռ:

Սորվեցուցէ՛ք մեզի անձնուիրութիւնը՝ որ ձեզմով կրկնապէս զմայլելի դարձաւ: Եկէ՛ք մեզի ով մեր պաշտելի մեռելներ և թող գիտնան բոլոր անոնք թէ մեր փոքրիկ ցեղը իր մեռելներն ալ գիտէ կանչել իր անօրինակ ճակատումին:

Իրաւունք ունէր նոյնպէս Եուկոսլաւ մեծ գործիչը երբ կը յայտարարէր. «Հաւատա՛ Հայ ժողովուրդ, երբ օր մը մարդկութիւնը սթափի իր այժմու թմբիրէն, գութ չէ որ պիտի ունենայ քու հանդէպ, այլ հիացում»:

Ամէն տարի այսօր, ազատուած մեր առօրեայէն, արցունքոտ աչքերով կը կենանք Ապրիլ 24-ի արիւնոտ պատկերին առջեւ, որ գերեզմանն է մեր մէկ ու կէս միլիոնին, մեր մտածումէն կանցնին նորէն մեր մեռելները, իրենց հազարերես վէրքերով:

Մեծ է թիւը աւագներէն յառնողներուն, անոնց ստուերները թափանցիկ են և գանկերը հնոց ճառագայթներու, զոր չեն կրցած մարել բոլոր բարբարոսութիւնները ժամանակներուն: Անոնք բոլոր մահուան դաշտերէն մեզի կը բերեն չմեռնող գաղափարի ոսկի երազը: Մեռելները չեն ապրիր երբ երազը մեռնի, և ողջերը ապրին երբ մեռելները լռեն: Այդ երազը մենք ունինք միասին, որ մեր ներկան երէկին և վաղուան կը կապէ:

Այդ անմեռ յուշերու խորհուրդով է որ ժողովուրդներ կը շարունակեն իրենց պատմական կեանքը, անոնց սրբազան և անմեռ յարգանքին մէջ գտնելու անհրաժեշտ ոյժը, անցեալ եղբրականութիւնը վերածելու ապագայ փառքին:

Մեր մեռելներու մարմինները մինչեւ այսօր կը բնակին հողին ներքեւ, նման անկէզ մորենիին, վերածելով իրենց կեանքը սիրոյ և բարութեան ստեղծումին: Անոնց գերագոյն փափաքն է որ մենք ապրողներս նոր դրախտը, փոխան կորստուած դրախտներու, խորտակելով համայնական ցաւն ահաւոր, ցաւը զիրար չսիրելու, որպէսզի անոնք իջնեն խաղաղ իրենց մահուան քունին և մենք ունենանք առհաւատչեան վաղուան երազին:

Ազգ մը ոգի է. երկու իրողութիւններ կը կազմեն այդ ոգին, անցեալի ժառանգութիւնը և ներկայի սէրը: Ապրիլ 24-ը եղբրական ժառանգութիւնն է:

Որքան ճիշդ է խօսքը մեր մեծ եկեղեցականին եթէ մենք կարենայինք զիրար սիրել այն չափով, որքանով որ կը սիրենք մեր մեռելները, այն ատեն տարբեր պիտի ըլլար մեր վերաբերմունքը իրարու նկատմամբ: Մենք իրապէս սիրած կ'ըլլանք մեր մեռելները, երբ գիտնանք հաշտ ապրիլ ողջերուն հետ, այս է Ապրիլ 24-ի գերագոյն

պատգամը մեզի սպանդէն ազատուողներուն:

Ինչ պիտի ըսէր իր հաւատքին համար ողջամահ եղող եկեղեցականը և ինչ կրակէ բռնեցող պիտի ծանակէր մեզ, դաշունահար եղող մորկավարս քերթողը, եթէ իրենց առիթը տրուէր տեսնելու մեր իրերամարտ կեցուածքը և մեր հոգիներուն բաժանումը մեր և իրենց գերագոյն նպատակին դէմ:

Ձի բաւեր Ապրիլ 24-ը նկատել իբրեւ բարոյականը մեր գոյութեան և թշնամիի ոճրային ծրագրին ձախողման, անհրաժեշտ է որ իրարու հետ ըլլանք միական և միախորհուրդ, առանց տարուելու օտար և ժամանակավրէպ հովերէն, յառած մեր նայուածքները մեր սեպհական ճրագին, անոր լոյսին ներքեւ հիւսելու ապագայի թեզանը:

Օրհնութիւն և փա՛ռք իրենց յիշատակին:

